

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված
ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման
աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական
նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման
13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր
հատակագծում հետևյալ փոփոխությանը.

| | |
|--|---|
| Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
| Երևան քաղաքի Գյուլիքևիյան փողոց N 10, N 10/1 և N 10/2 հասցեներում գտնվող 01-008-0405-0090 կադաստրային ծածկագրով 0.60222 հա, 01-008- 0405-0091 կադաստրային ծածկագրով 0.15974 հա և 01-008-0405-0092 կադաստրային ծածկագրով 0.06369 հա մակերեսներով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների հողեր | Երևան քաղաքի Գյուլիքևիյան փողոց N 10, N 10/1 և N 10/2 հասցեներում գտնվող 0.60222 հա, 0.15974 հա և 0.06369 հա մակերեսներով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ
օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին
համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն.
քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական
նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի
առնելով.

- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության կողմից նշված պայմանը
(կցվում է),

